Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 11-ի N 1467 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
«ԷՔՍՊՈ ՄԻԼԱՆ-2015» ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

1. «ԷՔՍՊՈ ՄԻԼԱՆ – 2015» ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

1. «Էքսպո Միլան-2015» համաշխարհային ցուցահանդեսն անցկացվելու է Իտալիայի Հանրապետության Միլան քաղաքում 2015թ. մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը: Ցուցահանդեսի խորագիրն է «Կերակրել մոլորակը, էներգիա կյանքի համար»: Ցուցահանդեսին նախատեսվում է 154 պետությունների և ավելի քան 40 միջազգային կազմակերպությունների մասնակցություն և կանխատեսվում է 29 միլիոն այցելու:

2. Մասնակից յուրաքանչյուր պետության խնդիրն է լինելու ներկայացնել իր մշակույթը, պատմությունը, ավանդույթները, տնտեսական և մտավոր ներուժը, ինչպես նաև նորարարությունները սննդի ոլորտում:

3. ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 4-ի N 870-Ա որոշման 1-ին կետի համաձայն՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարը ստանձնել է «Էքսպո Միլան – 2015» համաշխարհային ցուցահանդեսին ՀՀ մասնակցության գլխավոր հանձնակատարի պարտականությունները:

4. ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 4-ի N 870-Ա որոշման 2-րդ կետի համաձայն՝ «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ն, որպես ազգային օպերատոր, իրականացնում է «Էքսպո Միլան – 2015» ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցությունն ապահովելու նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքները՝ համագործակցելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ արտաքին գործերի նախարարության, շահագրգիռ պետական կառավարման մյուս մարմինների, ինչպես նաև իտալական կողմի կազմակերպիչների հետ:

5. Իտալական կողմի հետ Հայաստանի Հանրապետության մասնակցության պայմանագիրը նախատեսվում է ստորագրել մինչև 2014թ.-ի դեկտեմբերի 31-ը:

6. «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ին, ի դեմս գլխավոր տնօրենի, կառաջարկվի ստանձնել տաղավարի տնօրինության գործառույթը և աշխատանքային խմբի միջոցով իրականացնել ցուցահանդեսի նախապատրաստական աշխատանքները՝ արտահանման խթանման դեպարտամենտի տնօրենի գլխավորությամբ:

2. «ԷՔՍՊՈ ՄԻԼԱՆ - 2015» ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ

7. Հայկական լեռնաշխարհ, հայկական բարձրավանդակ կամ հայկական սարահարթ՝ այստեղ կազմավորվել և հազարյամակների ընթացքում իր քաղաքական ու մշակութային պատմությունն է կերտել հայ ժողովուրդը:

Հայերը հին ժամանակներից ի վեր նստակյաց կենսաձև են վարել, որն իր հերթին նպաստել է գյուղատնտեսական ավանդույթների զարգացմանը: Դարեր ի վեր հայ ժողովուրդը մշակել ու փայփայել է իր հողը՝ նույնիսկ ամենադժվարին պայմաններում և ամենաանհնարին վայրերում ստեղծելով դաշտեր և այգիներ: Հայկական մրգերը՝ աճելով այդ հողի վրա, ոռոգվելով հայոց քաղցրահամ ջրերով և շոյված լինելով Հայկական լեռնաշխարհի տաք արևով, ունեն անկրկնելի համ և բույր:

Հայկական խաղողի և ծիրանի տեսակները, գինու և տարբեր մրգերից, հացամթերքից ստացված ալկոհոլային խմիչքների պատրաստման ավանդական ձևերը մեզ են հասել դարերի խորքերից:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ «Էքսպո Միլան – 2015» համաշխարհային ցուցահանդեսին հայկական տաղավարը տեղակայված կլինի «Միրգ և բանջարեղեն» կոչվող կլաստերի տարածքում:

8. «Էքսպո Միլան – 2015» համաշխարհային ցուցահանդեսին հայկական տաղավարում նախատեսվում է ներկայացնել Հայաստանի սննդի ոլորտի զարգացման ուղին՝ անցյալից դեպի ապագա: Կներկայացվեն զարգացման պատմությունը, արտադրական տեխնոլոգիաները և ավանդույթները, հայկական խոհանոցը և նրա ազդեցությունը համաշխարհային սննդի մշակույթի վրա, զարգացման միտումները դեպի էկոլոգիապես մաքուր, օրգանական արտադրություն:

9. Ըստ կազմակերպիչների պահանջի՝ տաղավարը բաղկացած է լինելու երկու հարկից՝ յուրաքանչյուրը 125 քմ: Առաջին հարկում գտնվելու է ցուցասրահը, իսկ երկրորդ հարկում՝ օժանդակ տարածքները:

10. Ցուցասրահում հատուկ 3D տեխնոլոգիաների միջոցով տաղավարի պատերից մեկին կստեղծվի վիրտուալ այգի, որտեղ կներկայացվեն հայկական լեռնաշխարհին բնորոշ մրգերը՝ շեշտադրումը դնելով ծիրանի, որը մուտք է գործել Եվրոպա Հայաստանից (Prunus armeniaca), խաղողի ու նռան վրա:

11. Տաղավարի մի հատվածում կներկայացվի նաև հայկական խաղողը և աստվածաշնչյան պատմությունը, ըստ որի՝ խաղողագործությունը սկիզբ է առել Արարատ լեռան լանջի ստորոտից՝ Բիբլիական Նոյի ժամանակներից, երբ տապանը կանգ առավ Արարատ լեռան վրա՝ տարվա 7-րդ ամսվա 17-րդ օրը և Նոյ Նահապետը տնկեց խաղողի առաջին վազը: Հայաստանը հայտնի է ոչ միայն որպես առաջին քրիստոնեական պետություն, այլ որպես գինեգործության հնագույն կենտրոն, ինչի մասին վկայում է Արենիի գինեգործական համալիրը, որը մոտ 6000 տարեկան է, ինչպես նաև խաղողի 500 տեղական տեսակների առկայությունը: Տաղավարի ներսում՝ հատուկ նախատեսված տարածքում, ներկայացված կլինեն հայկական արտադրության գինիները և կոնյակները: Նրանք կտեղադրվեն շշաձև կրպակներում, որոնք հնարավորություն կտան ոչ միայն տեսնելու, այլև համտեսելու հայկական գինու և կոնյակի ներկա հարուստ տեսականին:

12. Տաղավարի առանձին հատվածում կներկայացվի հայկական գյուղի փոքրիկ մոդելը՝ իր բնորոշ հատկանիշներով, որտեղ այցելուները հնարավորություն կունենան ականատես լինելու, թե ինչպես է թխվում հայկական ավանդական լավաշը: Այցելուները կտեսնեն թոնիրը, խնոցին, ինչպես նաև կհամտեսեն որոշ հայկական ուտեստներ:

13. Ցուցասրահում դինամիկ հոլոգրաֆիկ սիմուլյացիայի միջոցով կստեղծվեն ուշագրավ շարժական պատկերներ՝ ներկայացնելով Հայաստանը:

Միաժամանակ կներկայացվեն հայ ժողովրդի հազարամյակների պատմությունը, մշակույթը, ինչպես նաև գյուղատնտեսությունը ներկայացնող նմուշներ, տեղեկատվություն և այլն:

14. Հատուկ սարքերի միջոցով /touch screen/ կներկայացվեն հայկական կոթողները, դարավոր արժեքները: Կներկայացվի նաև պեղումների ժամանակ հայտնաբերված շտեմարանների, կարաս-կճուճների, գարեջուր և քաղցրածիկ պատրաստելու և պահելու հատուկ անոթների, արտադրական գործիքների, խաղողի և գինու մշակույթի մասին

տեղեկություններ: Առանձին հատվածում կներկայացվի նաև տեղեկատվություն նշանավոր հայերի մասին, այդ թվում աշխարհահռչակ սփյուռքահայ անհատների, որոնց կյանքն ու գործունեությունը հետք է թողել պատմության մեջ:

15. Տաղավարի վերջում այցելուները կարող են հատուկ տեղադրված էկրանի վրա/ touch screen/ և տեսախցիկի միջոցով լուսանկարվել և իրենց լուսանկարի տակ թողնել բարեմաղթանքներ, առաջարկություններ, կամ երկրի մասին իրենց հետաքրքրող հարցեր: Այս համակարգը հետագայում թույլ կտա ստեղծել տեղեկատվական բազա, ինչպես նաև հետաքրքրված այցելուներին էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրել Հայաստանի մասին պատկերազարդ տեղեկատվություն:

16. Սպասարկող անձնակազմը կլինի հայկական տարազներով:

17. Նախատեսվում է հնադարյան մետաղադրամի մոդելի տպագրություն, որը կխորհրդանշի Հայաստանը և հայկական տաղավարը: Վերջինս կտրամադրվի տաղավար այցելող պաշտոնավոր պատվիրակություններին և հոբելյանական այցելուներին:

3. «ԷՔՍՊՈ ՄԻԼԱՆ – 2015» ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

18. Հայաստանը նախատեսում է վարձակալել 125 ք.մ ընդհանուր տարածք՝ «Միրգ և բանջարեղեն» կոչվող կլաստերի կազմում: Ցուցահանդեսի ծախսերը բաղկացած կլինեն տաղավարի վարձակալման, նախագծման, կառուցապատման, ներքին հարդարման, մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքների, տեխնիկական միջոցների, կոմերցիոն հատվածի, անհրաժեշտ գովազդային նյութերի և ցուցանմուշների ձեռք բերման, ապրանքների տեղափոխման, մաքսային ձևակերպումների, ապահովագրության, կոմունալ վճարումների, մուտքի արտոնագրերի, տոմսերի և հյուրանոցների, աշխատավարձի, ազգային օրվա և այլ միջոցառումների կազմակերպման, ինչպես նաև ընթացիկ աշխատանքների իրականացման հետ կապված գումարներից: Տաղավարի վարձակալման գումարը կկազմի 290 000 եվրո:

19. Ցուցահանդեսի նախապատրաստման և մասնակցության համար նախատեսված են ֆինանսավորման հետևյալ աղբյուրները՝

1) Արդյունաբերության զարգացման հիմնադրամի միջոցներ

2) կոմերցիոն հատվածից ստացված վճարներ
3) այլ միջոցներ:

4. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՑՈՒՑԱՆՄՈՒՇՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵԿՑՈՂ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

20. Ի կատարումն ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 4-ի N 870-Ա որոշման՝ բոլոր շահագրգիռ նախարարությունները, գերատեսչությունները և այլ կազմակերպություններն աջակցում են «Էքսպո Միլան-2015» ցուցահանդեսին՝ իրենց ոլորտին վերաբերող անհրաժեշտ ցուցանմուշներ ու լրատվական նյութեր տրամադրելով և նոր տեղեկատվական նյութեր պատրաստելով, ինչպես նաև «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ին նախօրոք տրամադրելով ցուցանմուշների ցանկերը, չափսերը, քաշը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ տաղավարի ընդհանուր ձևավորման, տեղափոխման նախնական հաշվարկների իրականացման նպատակով:
21. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ աջակցել ցուցահանդեսի շրջանակներում արտահանվող ցուցահանդեսային նմուշների և սարքավորումների մաքսային ձևակերպումների իրականացմանը:

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

22. Հայաստանի Հանրապետության ազգային օրը նախատեսվում է անցկացնել 2015 թվականի սեպտեմբերի 21-ին, որի շրջանակներում նախատեսվում է Հայաստանի Հանրապետության պետական պատվիրակության այցը:
23. Ազգային օրվա անցկացման ծրագրի նախագիծը նախապես կմշակվի Հայաստանի Հանրապետության բոլոր շահագրգիռ նախարարությունների, կազմակերպությունների և ստեղծագործական խմբերի հետ համատեղ: Ազգային օրվա ծրագրում պարտադիր մաս են կազմելու Հայաստանի Հանրապետության հիմնի կատարումը, դրոշի բարձրացման արարողությունը և ողջույնի խոսքը:

6 .ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

24. Պաշտոնական ընդունելությունը կազմակերպվելու է ցուցահանդեսի ընթացքում անցկացվելիք ազգային օրվա շրջանակներում:

25. Պաշտոնական ընդունելության ժամանակ նախատեսվում են պատվիրակության հանդիպումները կազմակերպիչների և իտալական բարձրաստիճան պաշտոնյաների հետ, այցելություններ այլ տաղավարներ, ինչպես նաև տոնական ֆուրշետ և համերգ:

26. Ցուցահանդեսի ընթացքում ակնկալվում է նաև երկու այլ միջոցառումների անցկացում՝ նվիրված գինի-կոնյակին և հայկական ծիրանին:

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՂԱՎԱՐԻ ԿՈՄԵՐՑԻՈՆ ՀԱՏՎԱԾԸ

Հայաստանի Հանրապետության տաղավարում նախատեսվում է կազմակերպել կոմերցիոն հատված, որը բաղկացած է լինելու երկու մասից՝ հայկական արտադրատեսակների, հուշանվերների խանութից և սննդի կետից: Սննդի հատվածում կներկայացվեն ազգային ուտեստները, խմիչքները և տեղում թխված լավաշը: Համապատասխան տարազով մատուցողները կներկայացնեն տեղեկատվություն բաղադրատոմսերի, ինչպես նաև ուտեստների և խմիչքների պատմության մասին:

8. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ին, ցուցահանդեսին հայաստանյան տաղավարում աշխատանքների վարման նպատակով, կառաջարկվի ապահովել աշխատակիցների գործուղումը:

9. ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ին՝ իտալական արտոնագրված ապահովագրական ընկերությունների միջոցով, կառաջարկվի կազմակերպել սպասարկող անձնակազմի բժշկական ապահովագրությունը «Էքսպո Միլան-2015» համաշխարհային ցուցահանդեսի ընթացքում:

10. ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերի հիման վրա կաջակցի սպասարկող անձնակազմի և պաշտոնական պատվիրակությունների մուտքի վիզաների օպերատիվ տրամադրման գործընթացին, ինչպես նաև դիվանագիտական ճանապարհներով համակողմանի օժանդակություն կցուցաբերի ցուցահանդեսի նախապատրաստմանը և ընթացիկ աշխատանքների կատարմանը:

11.ՀԵՏՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԱՅԻՆ ՇՐՋԱՆ

Ցուցահանդեսի ավարտից հետո ազգային օպերատորի կողմից կիրականացվի համապատասխան փաստաթղթերի ստորագրում, ակտերի կազմում և վերադարձման ենթակա ցուցանմուշների առաքում Հայաստան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ